

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Լյովա Խաչատրյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

1. «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ՝

1) 1-ին և 2-րդ հոդվածներն անհրաժեշտ է հանել՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնության կարգով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով ներկայացրած «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով արդեն իսկ կարգավորված են այդ հոդվածներով կարգավորվող հարաբերությունները: Բացի դրանից, 2-րդ հոդվածով նախատեսվում են

հարկային և պարտադիր վճարների գծով արտոնություններ, որոնք պետք է սահմանվեն հարկային և պարտադիր վճարների վերաբերյալ օրենսդրությամբ:

2) Անընդունելի ենք համարում 3-րդ հոդվածով նախատեսվող լրացումը, քանի որ այն կխոչընդոտի պարտատերերի սուբյեկտիվ իրավունքների իրականացմանը: Գտնում ենք, որ սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելուց հետո և պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ի հայտ եկած 3-րդ անձինք պետք է ցանկացած ժամանակ իրավունք ունենան պարտապանի փոխարեն կատարել նրա պարտավորությունները, իսկ պարտատերը՝ այն ընդունելու:

3) Գտնում ենք, որ 6-րդ հոդվածի կիրառման դեպքում հնարավոր է խախտվի պարտատերերի և պարտապանների միջև իրավահավասարության սկզբունքը, այն է՝ գույքի սեփականատերն անուղղակի ձևով զրկվում է տնօրինման, տիրապետման և օգտագործման իրավունքից: Դեռ ավելին, կարող է նաև նվազել «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 6-րդ հոդվածում (օրենքի 96-րդ հոդված) նշված իրացման ոչ ենթակա գույքի դիմաց վարկավորումը, այդ թվում՝ գյուղացիական տնտեսություններում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ նախագծով նախատեսվող լրացումները, բացառությամբ 2-րդ և 3-րդ հոդվածների, պետք է քննարկվեն Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնության կարգով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով ներկայացրած «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի քննարկման շրջանակներում:

2. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ պարզ չէ, թե 3-րդ հոդվածով լրացվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 887.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերով տրամադրված վարկերի որ ժամանակահատվածների մասին է խոսքը՝ ամսական, թե տարեկան: Վերը նշված դրույթների կապակցությամբ հայտնում ենք, որ դրանց կիրառումը կխոչընդոտի երկարաժամկետ վարկերի տրամադրմանը:

3. Հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի պահանջները՝

1) «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝

ա. վերնագրում անհրաժեշտ է «փոփոխություններ» բառը փոխարինել «փոփոխություն» բառով՝ հանելով «Հայաստանի Հանրապետության մասին» բառերը,

բ. 1-ին հոդվածը «օրենքի» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «թիվ ՀՕ-51-Ն» բառերով,

գ. 1-ին և 2-րդ հոդվածներն անհրաժեշտ է միացնել մեկ միասնական հոդվածում՝ նկատի ունենալով, որ երկու հոդվածներում կատարվող լրացումները վերաբերում են նույն հոդվածին,

դ. համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

2) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերնագրից անհրաժեշտ է հանել «փոփոխություններ և» բառերը՝ նկատի ունենալով, որ օրենքի նախագծում միայն լրացումներ են կատարվում.

3) «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածը «օրենքի» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «թիվ ՀՕ-15-Ն» բառերով:

Ելնելով նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախագծերի փաթեթի հեղինակին առաջարկում է դրա քննարկումը կազմակերպել Հայաստանի Հանրապետության կառավարության հիշատակած օրենսդրական նախաձեռնության քննարկման շրջանակներում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վարդան Արամյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-931-14.06.2010-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«Մնանկության մասին Հայաստանի Հանրապետության մասին Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին**

ՀՈՂՎԱԾ 1. «Մնանկության մասին Հայաստանի Հանրապետության 2006թ. դեկտեմբերի 25-ի օրենքի (այսուհետ՝ նաեւ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունը «եթե բառից հետո լրացնել «գույք չի հայտնաբերվել կամ բառերով, «նաեւ բառից հետո լրացնել «սույն օրենքի 96-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի համաձայն իրացման ոչ ենթակա գույքի արժեքը, փոխհատուցման ենթակա գումարի չափը, ե բառերով:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

«6. Եթե սույն հոդվածի 1-ին մասում նշված մարմինների կողմից խախտվել են սույն մասում նշված ժամկետը, ապա պարտապանի սնանկ ճանաչվելու դեպքում նրանց կողմից ներկայացվող պահանջներում դրամական պարտավորությունների (այդ թվում՝ ապահովված) եւ պարտադիր վճարումների (հարկերի, տուրքերի եւ այլ պարտադիր վճարների) գծով պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար հաշվարկման, վճարման կամ գանձման ենթակա տուժանքների եւ այլ ֆինանսական պատժամիջոցների, ինչպես նաեւ վճարման ենթակա տուժանքների հաշվարկը չի կարող գերազանցել այդ ժամկետի լրանալուն հաջորդող մեկ ամիսը:»

ՀՈՂՎԱԾ 3. Օրենքի «39-րդ հոդվածի 1-ին մասի «աե կետը՝ «պարտավորությունների, ինչպես նաեւ 2-րդ մասի «աե կետը՝ «տալը բառերից հետո լրացնել ստորակետով եւ «իսկ պարտատիրոջը՝ այդպիսի բավարարում ստանալը (ներառյալ՝ երրորդ անձանց կողմից կամ նրանց գույքի հաշվին, բացառությամբ երաշխավորի կամ երաշխիք տված անձի կողմից պարտավորության կատարման)» բառերով:

ՀՈՂՎԱԾ 4. Օրենքի 39-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 7-րդ մասով

«7. Սույն հոդվածով սահմանված պահանջների խախտմամբ ձեռք բերված ցանկացած համաձայնություն կամ կատարված գործարք (անկախ ձևից), որի արդյունքում կատարվել է կամ կարող է կատարվել պարտապանի ակտիվի օտարում, կամ լրացուցիչ պարտավորություն է առաջացնում կամ առաջացրել պարտապանի համար կամ բավարարվել է կամ կարող է բավարարվել որեւէ պարտատիրոջ պահանջ այլ կերպ քան սույն օրենքով սահմանված կարգով եւ/կամ հերթականությամբ, առոչինչ է:»

ՀՈՂՎԱԾ 5. Օրենքի 43-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 8-րդ մասով

«8. Սույն հոդվածով սահմանված պահանջի ապահովվածությունը, գրավադրված գույքի արժեքը (մեկնարկային գինը), երրորդ անձի գույքի գրավադրումը դադարեցնելու, կամ ապահովված պահանջի մարման դեպքում նվազեցվում է գույքի արժեքի այն չափը, որը 96-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի ենթակա չէ իրացման, կամ որը գույքի իրացման դեպքում օրենքով ենթակա է փոխհատուցման գույքի սեփականատիրոջը:»

ՀՈՂՎԱԾ 6. Օրենքի 96-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ

«Հոդված 96. ԻՐԱՑՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՐՏԱՊԱՆԻ ԳՈՒՅՔԸ

1. Պարտատերերի պահանջների բավարարման նպատակով իրացման (օտարման) ենթակա չէ պարտապանի այն գույքը, որի վրա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չի կարող բռնագանձում տարածվել:

2. Պարտատերերի պահանջների բավարարման նպատակով իրացման (օտարման) ենթակա չէ

ա) օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցող արժեք ունեցող պարտապանի միակ բնակելի տունը (բնակարանը, կացարանը)՝ նրա ընտանիքի յուրաքանչյուր շնչի համար առնվազն իննը քառակուսի մետրի չափով, ինչպես նաև գյուղացիական տնտեսությամբ զբաղվող պարտապանին սեփականության իրավունքով պատկանող, գյուղատնտեսական նշանակության հողամասը (առկայության դեպքում)՝ հինգ հարյուր քառակուսի մետրի չափով:

բ) պարտապանի՝ ամուսնական մատանին եւ այլ զարդեղենը, ինչպես նաև միակ տրանսպորտային միջոցը.

գ) պարտապանին պատկանող մեկ խոշոր կամ երկու մանր եղջերավոր անասունը, մեկ գույզ ընտանի թռչունը, ինչպես նաև մինչև խոշոր անասունների անամակերի հավաքելը կամ մինչև անասուններն արոտի դուրս բերելը դրանց համար անհրաժեշտ անամակերը.

դ) հերթական ցանքի համար անհրաժեշտ սերմացուն եւ տնկանյութը,

ե) պարտապանի օրգանիզմի կենսագործունեության համար անհրաժեշտություն ներկայացնող բժշկական սարքավորումները:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի «ա» եւ «բ» կետերում նշված գույքը կարող է իրացվել, եթե դրա արժեքը գերազանցում է իրացման պահին օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը՝ բնակելի տան (բնակարանի, կացարանի) համար, հարյուրհիսունապատիկը՝ այլ զարդեղենի համար, հարյուրհիսունապատիկը՝ տրանսպորտային միջոցի համար: Այդ դեպքում հավաքագրված միջոցների բաշխման ծրագրով առաջնահերթ (այդ թվում՝ ապահովված պարտատիրոջից առաջ) նախատեսվում է իրացված գույքի արժեքից փոխհատուցում պարտապանին՝ սույն մասում նշված չափերով:

Եթե պարտապանը չունի սույն հոդվածի 2-րդ մասի «գ» կետում նախատեսված գույքը, ապա պարտապանի այլ գույքի իրացումից ստացված միջոցներից սույն մասի առաջին պարբերությամբ սահմանված կարգով պարտապանին փոխհատուցման է ենթակա նաև երեք ամսվա ապրուստի միջոց՝ ամսական ընտանիքի յուրաքանչյուր շնչի համար օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափի հաշվարկով:

4. Պարտապանի կամ այլ անձանց պահանջով դատարանի որոշմամբ բռնագանձում կարող է չտարածվել բռնագանձման ենթակա պարտապանի այն գույքի վրա, որի արժեքը էական ազդեցություն չի կարող ունենալ պարտատերերի պահանջների բավարարման համար:

ՀՈՂՎԱԾ 7. Օրենքի 97-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե» եւ «գ» կետերով.

«ե) Սույն օրենքի 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված սարքավորումների արժեքը վճարելու պարտավորության, ինչպես նաև նույն հոդվածի 3-րդ մասով ստացված փոխհատուցման գումարների չափով պարտատերերի չբավարարված պահանջները մարելու պարտավորության.

գ) հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելու պարտավորության:ե

ՀՈՂՎԱԾ 8. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-931'-14.06.2010-SՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ
լրացումներ կատարելու մասին**

ՀՈՂՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 252-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3. Գրավ դրված գույքի վրա բռնագանձումը եւ դրա իրացումը կասեցվում է, եթե պարտապանին կամ երրորդ անձ գրավատուին սնանկ ճանաչելու դիմում է քննվում դատարանում:

Եթե պարտապանը կամ երրորդ անձ գրավատուն սնանկ են ճանաչվում, ապա գրավ դրված գույքի բռնագանձումը դադարում է, իսկ գրավ դրված գույքի իրացումը կատարվում է սնանկության հարաբերությունները կարգավորող օրենքով սահմանված կարգով:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենսգրքի

369-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4. Տուժանքի չափը չի կարող գերազանցել չկատարված (կետանցված) դրամական պարտավորության քսանհինգ տոկոսը: Այլ չափ նախատեսող համաձայնությունն առոչինչ է:

ՀՈՂՎԱԾ 3. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 887.1 հոդվածով

«Հոդված 887.1 Վարկային պայմանագրի տոկոսները եւ պատասխանատվության սահմանափակումը

1. Վարկային պայմանագրով սահմանվող տոկոսների չափը չի կարող գերազանցել տրամադրվող վարկի քսան տոկոսը, իսկ գրավատների կողմից տրամադրվող վարկի դեպքում՝ տրամադրվող վարկի հիսուն տոկոսը:

2. Վարկային պայմանագրով տրամադրվող վարկի գումարի տոկոսների, պատասխանատվության միջոցների (տուգանք, վարկի չմարված մասի չվճարված տոկոսի նկատմամբ հաշվարկվող տույժեր, վարկի չմարված մասի նկատմամբ վարկային պայմանագրով նախատեսված սկզբնական տոկոսը գերազանցող տոկոս, չվճարված տոկոսի նկատմամբ լրացուցիչ տոկոսի հաշվարկ եւ այլն) եւ վարկի տրամադրման համար վարկատուի կողմից

գանձվող վճարների հանրագումարը չի կարող գերազանցել տրամադրվող վարկի գումարի երեսուն տոկոսը, իսկ գրավատների կողմից տրամադրվող վարկի դեպքում՝ վաթսուն տոկոսը:

3. Արգելվում է վարկի տրամադրումն այնպիսի հանգամանքների մասին իրազեկ լինելու դեպքում, որոնք ակնհայտորեն վկայում են այն մասին, որ վարկառուին տրամադրված

վարկի գումարը ժամկետում չի վերադարձվի: Եթե վարկն այնուամենայնիվ տրամադրվել է, ապա վարկի գումարի վրա ենթակա են հաշվարկման եւ վճարման միայն սույն օրենսգրքի 411-րդ հոդվածի առաջին կետով նախատեսված չափով տոկոսներ:

3. Սույն հոդվածի առաջին եւ երկրորդ մասերով սահմանված պահանջների խախտմամբ ձեռք բերված ցանկացած համաձայնություն առոչինչ է:

ՀՈՂՎԱԾ 4. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՂՈՒՅԹՆԵՐ

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ
Պ-931²-14.06.2010-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«Հրապարակային սակարկությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին

ՀՈՂՎԱԾ 1. «Հրապարակային սակարկությունների մասին Հայաստանի Հանրապետության 2003 թվականի հոկտեմբերի 8-ի օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 3-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Սնանկ ճանաչված անձանց գույքի իրացման առանձնահատկությունները սահմանվում են Օրենքով:»

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «2) Դատարանում քննվում է լոտի կամ դրա մի մասի սեփականատիրոջը կամ այն անձին, ում պարտավորությունների ապահովման համար գրավադրվել է իրացվող գույքը սնանկ ճանաչելու դիմում կամ նրանցից որեւէ մեկը սնանկ է ճանաչվել:», իսկ 4-րդ կետը «հրապարակային ծանուցումը բառերից հետո լրացնել «բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքի» բառերով:

ՀՈՂՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, «Հրապարակային սակարկությունների մասին» եւ «Մանկության մասին ՀՀ օրենքներում կատարվող փոփոխությունների անհրաժեշտության

Առաջարկվող փոփոխությունները նպատակ ունեն ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում հստակեցնել պարտատերերի եւ պարտապանների միջեւ առկա եւ ծագող քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորումը՝ իրավահավասարության, արդարացիության եւ իրավունքի չարաշահման արգելքի սկզբունքներից ելնելով:

Դատական պրակտիկան վկայում է այն մասին, որ բանկերի եւ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի գումարները չվերադարձնելու հետ կապված քաղաքացիական գործերի քննությունը ՀՀ դատարաններում անընդհատ շատանում է: Մի կողմից լավ է, որ պարտատերերի եւ պարտապանների միջեւ հարաբերությունների կարգավորումը հստակորեն մտնում է իրավական դաշտ: Սակայն պրակտիկան նաեւ վկայում է, որ լրջագույն խնդիրներ են առաջանում հատկապես բնակչությանը տրամադրվող վարկերի վերադարձելիության հետ կապված:

Այսպես, մի կողմ թողնելով այն հանգամանքը, թե ինչպես եւ ինչ կարգով են տրամադրվում վարկերը, քանի որ դա ավելի շատ իրավապահ մարմինների խնդիրն է, անդրադառնանք բանկերի եւ վարկային կազմակերպությունների կողմից կնքվող վարկային պայմանագրերում առկա՝ ենթադրաբար «կողմերի համաձայնությամբ» ձեռքբերվող համաձայնությանը:

Բնակչության ցածր իրավագիտակցությունը թույլ չի տալիս հասկանալ կնքվող պայմանագրերում առկա պատասխանատվության միջոցների համակարգային գործողությունն ընդհանրապես: Իսկ կնքվող պայմանագրերի գերակշիռ մեծամասնությունը նախատեսում է քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցների մի համակարգ, որոնց միաժամանակյա գործողությունը անհնարին է դարձնում վարկի վերադարձն ընդհանրապես՝ հետեւյալ պատճառներով:

Նախ եւ առաջ մեր համոզմամբ բանկերի ու վարկային կազմակերպությունների կողմից վարկերի տրամադրման (անկախ վարկի տեսակից) համար սահմանված պայմանների եւ դրանք հիմնավորող փաստաթղթերի ներկայացման եւ ստուգման պահանջները կրում են գուտ ձեւական բնույթ՝ դրանք շատ հեշտ է շրջանցելը՝ ձեւական (փաստաթղթային առումով) տեսանկյունից բավարարելով ներկայացվող պահանջների համապատասխանություն: Անշուշտ բնավ խարախուսելի չէ, երբ կարիքից դրված անձինք գնում են նման քայլերի, սակայն նույն կերպ դրվատանքի արժանի չէ նաեւ ֆինանսական հաստատությունների կողմից վարվող քաղաքականությունն այն առումով, որ մեծամասամբ քաջ գիտակցելով վարկառուի վճարունակ չլինելը, այսինքն նախապես իմանալով վարկի վերադարձելության անհնարիության մասին, այդ վարկերն այնուամենայնիվ տրամադրում են: Մեր կարծիքով սա բովանդակային առումով անթույլատրելի եւ անհարիր է հայ ժողովրդին ընդհանրապես եւ խայտառակում է Հայաստանն ամբողջությամբ: Ուստի եւ պետք չէ զարմանալ արտերկրում, հատկապես սփյուռքահայության շրջանում տիրող այն կարծիքին, որ երկրում թալան է գնում: Անձին վարկ տալ, քաջ գիտակցելով դրա անվերադարձելիությունը եւ որպես վարկի վերադարձելիություն գրավ ընդունել նրա տունը, հողը կենդանիները կամ այլ գույքը, չի կարող ունենալ այլ միտում, քան այդ գույքին տիրանալը: Ընդ որում այդ պարագայում ակնհայտ է նաեւ այն հանգամանքը, որ գույքին տիրանալն ունի շուկայականից ակնհայտ ցածր գնով անձից ձեռք բերելու միտում՝ շուկայական գնով գույքը ձեռք բերելու դեպքում շահույթն էական չի լինի:

Այսպես, վարկային պայմանագրերում աչքի է զարնում պայմանագրի տոկոսը, որը որոշակի է կողմերի համար: Սակայն բոլոր պայմանագրերում նախատեսվում են տարբեր

պատասխանատվության միջոցներ՝ չվճարված մայր գումարի նկատմամբ այլ տոկոսագումարի հաշվարկ, դրա չվճարման համար տույժեր: Դրանք առերեւոյթ փոքր են, սակայն դրանց բուն մեծությունը կախված է բացառապէս մի հանգամանքից՝ որքան կլինի ժամկետի կետանցը: Այս ժամկետն ինքնին կախված է վարկատուից: Վարկային պայմանագրերում կիրառվող պատասխանատվության միջոցների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց համատեղ կիրառումը առարկայական հնարավորություն է ստեղծում վարկատուի համար սպասվող արդարացի եկամտի՝ վարկային պայմանագրով սահմանված սկզբնական տոկոսի կրկնապատիկը կամ ավելին ստանալ: Այս հանգամանքը ուղղակի շահագրգռում է վարկատուին «համբերատարե սպասել: Մինչդեռ իրական սպասելիքը ժամանակը ձգելով շահույթ ստանալն է: Անշուշտ կարող է դիրքորոշում ներկայացվել, թե սպասելու պատճառը անձին վճարելու հնարավորություն տալն է: Սակայն գտնում ենք այդ պատճառաբանությունն անհիմն է, եթե դա տեւում է տարիներ: Դրա մասին վկայում է հետեւյալ պարզագույն հաշվարկը.

Վարկառուի կողմից իր պարտավորությունների բարեխիղճ կատարման դեպքում հետ ստացած վարկի գումարը վարկատուն տեղաբաշխում է նույն տոկոսով: Այսինքն ենթադրվում է, որ պարտավորությունների բարեխիղճ կատարման դեպքում վարկատուի ողջամիտ ակնկալիքը այն նույն տոկոսագումարի ստանալն է, ինչ տոկոսով որ տրամադրվել էր վարկը: Սակայն վարկառուն չի կարողանում կատարել իր պարտավորությունը (ինչի մասին որպէս կանոն գիտեր վարկառուն), իսկ վարկառուն սպասում է: Արդյունքում վարկի չվճարված մայր գումարի մասը սկսում է հաշվարկվել սկզբնական տոկոսը գերազանցող տոկոսով, կամ սկսում են հաշվարկվել օրական տույժեր կամ միաժամանակյա տուգանքի գումար է սահմանված վճարելու կամ բոլորը լրիվ կամ մասնակի համատեղ: Արդյունքում վարկատուի համար իրական հնարավորություն է ստեղծվում սկզբնական տոկոսագումարից, այսինքն առերեւոյթ ցույց տրվող ակնկալիքից էապէս ավելին ստանալ:

Մյուս կողմից վարկի վերադարձելությունն ապահովվում է գույքի գրավով: Գրավադրվող գույքը, որպէս կանոն, գնահատվում է իր շուկայական արժեքից ոչ պակաս, քան 20 տոկոս ցածր: Միաժամանակ նաեւ որպէս ապահովվածության չափ ընդունվում է գնահատված արժեքի մոտ 70-80 տոկոսը: Այսինքն իրականում վարկի վերադարձելիությունն ապահովված է լիարժեքորեն: Թեւեւ կարող են բերվել օրինակներ, իբրեւ թե խնդրեմ, գույքն իրացվել է ավելի էժան քան վարկատուի պահանջն է եղել, սակայն յուրաքանչյուր դեպքում բավարար է պարզագույն հաշվարկ կատարել եւ ակնհայտ կդառնա, որ չբավարարված պահանջների գերակշիռ մեծամասնությունը տուժանքի գումարներ են, իսկ վարկատուն ստացել է էապէս ավելին, քան կստանար, եթե վարկառուն ի վիճակի լիներ իր պարտավորությունները ժամանակին կատարել:

Ուշադրության արժանի ենք համարում նաեւ այն հանգամանքը, որ պայմանագրերով նախատեսվող պատասխանատվության միջոցների կիրառմամբ վարկատուների կողմից ստացվող իրական շահույթը առավելապէս գերազանցում է ՀՀ ԿԲ կողմից սահմնվող բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկն այն դեպքում, երբ ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում վաշխառության համար: Այն բնորոշվում է հետեւյալ կերպ. «պարտք տրված դրամի կամ տեսակային հատկանիշով որոշվող գույքի համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող չափով տոկոսներ ստանալը, ինչպէս նաեւ անձի հետ նրա համար ծայրահեղ ոչ ձեռնտու պայմաններում այլ գործարք կատարելը, որից օգտվել է մյուս կողմը: Այսինքն որեւէ ֆիզիկական անձի կողմից նման արարք մեկ անգամ կատարելը, ինչը ձեռնարկատիրություն չի հանդիսանում, բավարար է վերջինիս վաշխառու կոչելու համար, մինչդեռ էապէս նույն արարքը որպէս ձեռնարկատիրություն իրականացնելը որեւէ կերպ չի հետապնդվում օրենքով՝ քանի որ որպէս վարկատու հանդէս է գալիս լիցենզիա

ստացած իրավաբանական անձը: Եթե անգամ Հայաստանում իրավաբանական անձինք ենթակա չեն քրեական պատասխանատվության, ապա գտնում ենք, որ նրանք պետք է օբյեկտիվ կողմից էապես նման արարքն կատարելու հնարավորություն չունենան օրենքով սահմանված արգելքի ուժով: Իսկ նման արգելք սահմանելու իրավասությունը օրենսդիր մարմինն է, որը կարող է եւ մեր համոզմամբ պարտավոր է նման արգելք սահմանել, հանուն հայ ժողովրդի:

Առաջարկվող փոփոխություններն ու լրացումները ունեն համակարգային բնույթ: Ներկայումս վճարելու կարողություն չունեցող՝ անվճարունակ պարտապանի պաշտպանության միակ ինստիտուտը սնանկությունն է:

Այդ հանգամանքը փաստարկվել է ՀՀ Սահմանադրական դատարանի 2008թ. փետրվարի 25-ի ՄԴՈ-735 որոշմամբ: Ներկայացվող փոփոխությունները նպատակ ունեն կարգավորել այդ ինստիտուտը հնարավորություն ընձեռելով սնանկ ճանաչված անձանց առողջացման՝ բացառելով որեւէ մեկի կողմից իր պարտականությունները անբարեխիղճ կատարելու պատճառով ֆինանսական առողջացումն անհնարին դարձնելու հանգամանքը: Հիմնական փոփոխությունները վերաբերվում են այն հանգամանքին, որ սնանկ ճանաչված ֆիզիկական անձը չպետք է ձեռք բերի անտուն անօթեւան թափառականի կարգավիճակ եւ նրան պետք է նվազագույն հնարավորություն ընձեռվի գոյատևելու: